

ՊՈՒԼԿԱՐԻԱ

ՊԱԹՄԱՆՆԵՐ

Տարեկան 8 Ֆր.
Վեցամսեայ 4 Ֆր.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան 10 Ֆր.
Վեցամսեայ 5 Ֆր.


ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2. Տօլ.
Վեցամսեայ 1. Տօլ.

ԿԱՆԻՍԻԿ

ԽԱՆՈՒՑՄԱՆ ՏՈՂԸ

20 ՄԵՂ.



ԼՐԱԳԻՐ

ԱՂԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԷՆ ՇԱՐԱԹ ՕՐԵՐ

ՀԱՍՑԷ
Rédaction du Journal
«Ira vounk»
Varna
АКЦИЯ НА
ВѢСТНИКЪ
«Нравуникъ»
Варна

Իրոպիւնք եւ չեն տրոպիւր

ՄԵՐ ԱՂԳ. ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԸ

Ընդհանուր տրտունջ կայ մեր պուլկարայայ աշխու վարժարան. ներու մասին թէ արդիւնք չեն տար. և շատեր դիտել կուտան թէ՛ հակառակ որ վերջին տարիներս վարժարաններու պիւտճէները կրկնապատկուած և նոյնիսկ եռապատկուած են, բայց ստացուած արդիւնքը բնաւ չի համապատասխաներ ասկէ 10-15 տարի առաջուան արդիւնքին. իրաւ է որ այն ատեն տեղական Աղգ. վարժարաններէն ելած պատանիներէ շատերը այժմ վաճառատանց մէջ բաւական կարող գրագիրներ ու պաշտօնեաներ են և կամ հրապարակին վրայ գործող ուժեր են, ըստ բաւականին հիմուտ հայերէնի պուլկարներէն և քիչ մըն ալ ֆուսսներէն, տոմարակալութեան և այլն:

Արդի վարժարաններուն աւելի ծախք և համեմատաբար նուազ արդիւնք տալերուն պատճառը շատեր իրարու կը հարցնեն և եզրակացութեան մը չեն կրնար յանգիլ:

Ըստ մեր համոզման, այս գրէթէ ապարդիւն ընթացքին պատճառները շատ են, որոնց գլխաւորները կուգանք հոս թուել:

- 1) Խղճամիտ ու անձնուէր ուսուցիչներու պակասը:
- 2) Ուսուցչական կազմին, վարժարաններու և հոգաբարձութիւններու շուրջ դարձուած կուտակցական էնթրիքները, որոնք արգելք կըլլան խղճամիտ ուսուցիչներու գէթ քանի մը տարի միևնոյն յարկին տակ պաշտօնավարելուն:
- 3) Կրթական ծրագրի խառնաշփոթ վիճակը:
- 4) Մեղմնութիւն հաւատքին խախտումը Աղգ. վարժարաններու մասին և իրենց անդիտակից յարուժը դէպի օտար հաստատութիւններ:
- 5) Հոգաբարձութիւններու անփութ վերաբերումը դէպի իրենց նուիրական պաշտօնը, զոր կը ստանձնեն ստէպի փառս մարդկան:

6) Որոշ և ապահով պիւտճէի մը չգոյութիւնը:

Ահա գլխաւոր պատճառները մեր վարժարաններու նուազ արդիւնքի վիճակին:

Բայց միևնոյն ատեն պէտք է նկատի ունենալ թէ՛ մեր այսօրուան վարժարանները ընդհանրապէս քառամեայ շրջան մը ունեցող պարզ նախակրթարաններ են, որոնցմէ երկրորդական վարժարանէ մը սպասուած արդիւնքը ակնկալելը տղայամտութիւն է: Մեր ծնողներէ շատերը կը սպասեն որ իրենց փոքրիկները 3-4 տարի Աղգ. վարժարան յաճախելով ուսած ըլլան բաւական լաւ հայերէն, պուլկարներէն, ֆուսսներէն, հայտնակալութիւն և այլն: Եւ իրենց փոքրիկները, Անոնք նազամ մը չեն հաճիր բաղդատութեան գնելու մեր Աղգ. վարժարաններու համապատասխան քառամեայ շրջան մը միայն բոլորող՝ պուլկար նախակրթարաններու սաներուն հմտութիւնը մերիներու հմտութեան հետ:

Եթէ առանց յուստեմտութեան և անկախանդ մտքի բաղդատութիւն մ'ընեն, չենք կարծեր որ համեմատաբար շատ ողբալի եզրակացութեան մը հասնին:

Բայց ուրիշ խնդիր է թէ մենք Հայերս, օտար մթնոլորտի մէջ, մեզ շրջապատող բնիկ տարրերու հետ յաջողապէս կեանքի պայքար մղելու համար, վազելու պէտք ունինք: Ահա այդ վազքին մէջ է որ մենք ստէպ կը սայթաքինք, որովհետեւ խելացի կերպով, հեռատեսութեան տակաւին չենք գծած այն ուղին ուրկէ պէտք է վազել: Այո, չենք ճշդած թէ ինչ ծրագիր տալու ենք մեր վարժարաններուն, որոնք կարենան մեզ տալ այս երկրին մէջ մեզ վիճակելի դիրքին համապատասխան և նպատակայաշմար արդիւնք: Ուրեմն նախ ճշդենք մեր ուղին և գծենք մեր ծրագիրը:

Յ. Պուրպիւր



ԱՂԳԱՅԻՆ

Պոլսոյ Աղգ. Պատրիարքարանի մէջ որջացած քանի մը մարդիկ, ինչպէս Հրանդ Մարգարեան և իր եղբայրը Տիրայր վարդապետ Մարգարեան, Օրմանեանի պատրիարքութեան շրջանին և անկէ յետոյ հազարի զեղծումներ գործած, գաղտնիքներ դուրս տուած, պաշտօնաթուղթեր վերցուցած և կտակներ շահագործած ըլլալով, այսօր օձիքնին ձեռք կուտան Երուսաղէմի կտակին խնդրով: Այս կտակը անցեալ տարի շահագործեց նաև բանասէր Կ. Բասմաշեանը իր Դաշնակցականի հանգամանքով և Շաշրիկեանի հովանաւորութեամբ: Սակայն զեղծարարութեանց հէրոսները այժմ ազգային իշխանութեան առջև քննութեան ենթարկուած ըլլալով, յուսալի է որ իրենց աժանի վարձքը ստանան դիզած հարկստութիւններն ալ վրայ տալով:

Բիւզանդիոնի Տնօրէնը 10 լիրա տուգանքի դատապարտուեցաւ յունկար ամսոյ մէջ գրած մէկ հատուածին համար, որով Համիտիէ քիւրտ հեծեալազօրքի զեղապետ Թայյար պէյ ամբաստանուած էր վանայ ժողովուրդը հարստահարելուն համար: Բիւզանդիոն և ուրիշ երկու հայ թերթեր այս լուրը գրած էին հիմնուելով վանայ առաջնորդարանէն Պատրիարքարան ուղղուած գրութեան մը վրայ, որով Առաջնորդարանը կը խնդրէր Պատրիարքարանէն՝ Թայյար պէյը վանէն հեռացնել:

Բայց Դաշնակցական ժողովականներէ կառավարուած նոյն առաջնորդարանը վատութիւնը կուենեայ վալիին գրաւորապէս պատասխանելու թէ ինք գանգատ չունի Թայյար պէյի դէմ, որպէսզի այս վերջինը կարենայ դատապարտել տալ Բիւզանդիոնի Տնօրէնը. հոգ չէ թէ Թայյար պէյ շարունակէ իր շահատակութիւնը:

Մարաշի Հայերը բողոքական և կաթոլիկ ազգայիններու հետ համերաշխաբար լսարան մը հաս-

տատած են և պատրաստութիւն կը տեսնեն Բարձր-վարժարան մըն ալ հաստատելու տեղւոյն ամբողջական Գոլէճին կից: Երեք հայ հատուածներուն սա միացեալ գործունէութիւնը միութարակաւ երևոյթ մըն է Աղգին մէջ:

Եգիպտոսի Հ. Բ. Ը. Միութիւնը տեղեկութիւն ստանալով Սասնոյ ազգայնոց խղճալի վիճակի մասին, անմիջապէս 70 ոսկի ջրկած է Սասուն:

Վանի, Պանտրմայի և Լէմի-նաթըրի (Ամերիկա) մէջ ևս նոյն Բարեգ. Միութեան մասնաճիւղեր հաստատուած են:

Միացեալ Ընկերութիւնը այսօր կը պահէ 52 վարժարաններ Հայկական դաւառներու մէջ 5000է աւելի երկսեռ հայորդիներ կը կրթուին ընկերութեան ծախքով: Միացեալի ծախուց գումարը կը հասնի մօտաւորապէս 100000 ֆրանքի:

Իզմիրի կուսակցականները ներքին գործոց նախարարին դիմելով, եկեղեցիներու մէջ միութիւնի գումարելու մասին, առաջնորդարանի արգելքին դէմ, կառավարութեան միջամտութիւնը խնդրել են, ըսելով թէ Իզմիրի Հայերը մեծ մասամբ յետաշրջական (աէագոսիոնէր) գաղափար ունեցող անձեր են: Այս ամբաստանութեան մասին նախարարին հարցումին վալի պատասխանած է պէտք եղած կերպով, և որով այդ դաւաճանական դիմումը անհետեւնք ֆիացած է:

Վանէն կը գրեն թէ Բիւզանդիոնի տնօրէնը հարուածող տղան վանայ որբանոցէն վաճառուած ու գողութեան և օճրագործութեան պատճառաւ տեղւոյն կառավարութեան հետապնդուելով Պոլիս փախած ծանօթ ստահակ մըն է: Ուրեմն փառք իր պատկանած կուսակցութեան:

Այս միջոցիս կարգ մը ազգայիններու կողմէ գովելի եռանդ մը ցոյց կը տրուի Դպրոցասիրաց ընկերութիւն մը կազմելու, բարձրացնելու համար տեղւոյս Աղգ:

(Շար. 4րդ կրես)

Է Զ Մ Ի Ա Ծ Ի Ն

ՆՈՐ ՎԵՆԱՐԱՆԻ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆԸ

Վաղարշապատ, 7 յունիսի
Երէկ, յունիսի 6ին, կատարվեց Այ. Մանթաշեանի հաշուով շինվելիք նոր վեհարանի շինութեան հիմքի օրհնութիւնը։ Երեւանից պատգամաւորներ, թեմական դպրոցի հին և նոր հոգաբարձական և ուսուցչական կազմերը՝ գլուխ ունենալով իւրեւն Վ. Մուրադ-բէգեանին և երկուսն բազմութիւն և կել էին օրվան այդ հանգիստին ներկայ լինելու։ Ժամը 9ին սկսվեց պատա-րագը պատարագիչը Մեսրոպ եպիսկոպոսն էր։
Պատարագը երբ վերջացաւ, միաբա-նութիւնը շուրջաւ խաչով, խաչառու կերպով, գլուխ ունենալով Վեհ. Հայրապետին բոլորեց հանգուցեալ երջանկայիշատակ իւրեւն Հայ-րիկի գերեզմանը, որի վրա մի օր առաջ քաշել էին կաթողիկոսավայել մարմարեան քար։
Գերեզմանաքարի վրա գրված էր հետեւեալ արձանագրութիւնը։ «Կաթո-ղիկոս Ամենայն Հայոց Մկրտիչ Ա. իւր-բիմեան Հայրիկ. Նուագող վշտից հայ-րենեաց Հայոց. ծնեալ է 4-ն ապրիլի 1820 ամի, վախճանեալ է 29-ն հոկ-տեմբերի 1907 ամի»։
Հոգեհանգստից յետոյ երգեցին «Հրաշափառ» շարականը և երգելով նոյն թափօրը Տրդատայ դարպասից դուրս գալով դիմեց գէպի նոր շին-վելիք վեհարանի տեղը, որի հիմքը արդէն փորված էր։
Նոր վեհարանը շինվում է Բագար կոչված շինութեան ետեւ և, ինչպէս իմացանք, լինելու է 30-60 սեն-եակից։
Վեհափառի ամպնովանին տանում էին Երեւանից եկած պատգամաւորնե-րից չորս հոգի։ Հանգիստին ներկայ էր նաև Երեւանի նահանգապետ կոմս Տի-գէնհաուզէնը։
Կաթողիկոսը բազմեց պատրաստված գահի վրա։ Օրհնութեան կարգը երբ վերջացաւ, նախ Վեհափառը իջաւ ցած հիմքը, որի իջնելուն և բարձրանալուն օգնում էին լուսարարապետ՝ ապա մա-տուցվեց Նորին Վեհափառութեանը մի մատուցարանով մուրճ, մալա և քա-րեր։ Իսկ մի ամանով պատրաստի կիր և աւազ։ Նախ Վեհափառը մալայով վերցրեց աւազախառն կիրը և ամեց արձանագրութեան կողքը և վեց հատ քար դրեց, նահանգապետը 2 քար, Մեսրոպ արքեպիսկոպոսը 1 քար, Սուքիաս արքեպիսկոպոսը 1 քար, տեղակալը 1 քար, Մեսրոպ եպիսկո-պոսը 1 քար և Մանթաշեանի ներկա-յացուցիչը 3 քար։
Վեհափառը ասաց մօտաւորապէս հե-տեւեալը։ «Հայ զաւակներ, մարդիկ ի-րանց անոնք անմահացնում են բարեւ-րարի յիշատակ թողնելով։ Այլքսանդր Մանթաշեանը շինում է այս վեհարանը ոչ միայն կաթողիկոսների համար, այլ նաև ազգային հաստատութիւնների՝ օրինակ սինոդի, կառավարութեան և այլ վանքական հաստատութիւնների համար։ Բայց Մանթաշեանը ոչ թէ միայն այս շինութիւնն է շինում, այլ շինում է նաև Ներսիսեան դպրոցը, որի մէջ հազարաւոր մանուկներ պիտի սովորեն և ազգին պիտանի զաւակներ դառնան։ Եւ բացի այս՝ շինել է Պարի-զի մէջ հայոց հոյակապ եկեղեցին և մատուռը։ Հայ զաւակներ, ձեր յիշու-ղութեան մէջ կենդանի պահէք Ման-թաշեանին՝ օրհնած լինի նրա կեանքը, և արեւշատութիւն խնդրէք նրա հա-ջար։ Սյուր օրհնում եմ այս շինու-

թիւն Նիկողայ Կայսերթագաւորութե-ան օրով, որը պիտիստել է իր հովա-նաւորութեան տակ հայերին նիւթա-պէս և բարոյապէս մեծացնել։ Փոխար-քայ կոմս Վօրոնցով-Դաշկովի օրով, որը առհասարակ իր հպատակներին նայում է բարի աչքով, իսկ հայերի համար իսկական հայր է հանգիստեցել։ Երեւանի նահանգապետի ներկայութե-ամբ, որ իրան յանձնված երկիրը խա-ղաղ կերպով է կառավարում, և ձեր ներկայութեամբ ու գործակցութեամբ, միաբանակից եպիսկոպոսներ։ Օրհնե-ալ լինի և Բարեգործական Ընկերու-թեան յիշատակը։ Պիտեմ որ, հայ զա-ւակներ, դուք էլ անպատճառ ձեր լու-ման ձգած կը լինէք այնտեղ»։ Եւ ապա պահպանելով ժամը մօտ 4-ին փակեց հանգէսը։
Այդ օրը վանքի սեղանատանը ճաշ կար։ ճաշին հրաւիրված էին Երեւանից և զաւարեց եկած պատգամաւորները, Վաղարշապատի քահանաներից, ծխ-դպրոցի հոգաբարձուները և ուսուցիչ-ները, ճեմարանի ուսուցչական խումբը մինչդէռ ծառայողները և ուրիշ հիւրեր։
Ժամը 2-ին բոլոր հրաւիրվածները գրաւեցին իրանց համար յատուկ պատ-րաստված տեղերը և սպասեցին Նորին Վեհափառութեան։ Չանցած 15 րոպէ վեհափառը եկաւ եպիսկոպոսների հետ և բազմեց իր տեղում ու օրհնեց սե-ղանը։
Առաջին կենացը ստաշարկեց Վեհա-փառ Կաթողիկոսը Նորին Մեծութիւն թագաւոր Կայսրի կենացը մօտաւորա-պէս հետեւեալ խօսքերով։
«Թուսաց լայնածաւալ պիտութեան կայսրների հովանաւորութեան տակ հայ ազգը միշտ բազմաւոր է եղել և այժմ էլ ներկայ Կայսրի հովանաւո-րութեան տակ զգում է իրան բազ-դաւոր, թէ անցեալի և թէ ներկայի նրանց բարեբարութիւնը ապի է Հա-յերին իրար հետ ինչպէս մի օղակ։ Կոչենք՝ ապրի Կայսրը յաւիտեան»։
Այս կենացը խմվեց յոտնկայս, և սեղանատան կամարների տակ երկար ժամանակ արձագանք էր տալիս կեց-ցէներին և ուռնաների արձագանքը։ Եր-կորդ կենացը առաջարկեց կրկին Կա-թողիկոսը՝ Կովկասի Փոխարքայ կոմս Վօրոնցով Դաշկովի կենացը մօտաւո-րապէս հետեւեալ խօսքերով։
«Բոլորիս յայտնի է, որ Կովկասի Փոխարքան հայր է հանգիստեցում իր հպատակներին և հովանաւորում է նը-րանց։ Համարձակվում եմ ասել, որ մանաւանդ նրա՝ հովանաւորութիւնը տարածված է մեզ հայերի վրա, ապ-րի՛ այդ կեանքը»։
Այս կենացը ևս խմվեց յոտնկայս և կեցցէներով, Երբորդ բաժակը խոն-նահանգապետը առաջարկելով հայոց եկեղեցիների հաստատութեան և Նորին Վեհափառութեան կենացը։ Այս կենացը նոյնպէս խմվեց յոտնկայս և կեցցէնե-րի ու ուռնաների տարափի տակ։ Տե-ղապահը առաջարկեց նահանգապետի կենացը։ Կոմս նահանգապետը առա-ջարկեց սեղապափի կենացը։
Վեհափառը նորից բաժակ բարձրա-ցրեց և ասաց մօտաւորապէս հետե-ւեալը։
«Այսօրվայ հիմնադրութիւնը՝ վեհա-րանի շինութիւնը հայ ազգի պատուա-կան զաւակի՝ Մանթաշեանի բարեգոր-ծութիւններից մէկն է։ Այս բաժակը բարձրացնեմ և քամեմ այն անձի համար, որ իր նիւթական միջոցներից բաժին է հանել հայ ազգի բարօրու-թեան, և եկեղեցիների բարգաւաճման համար չէ խնայում իր լուծման։ Խմենք այդ անձի կենացը»։
Կրկին կեցցէները թնդացրին սեղա-

նատան կամարները։ Նորից Վեհափառը վեր կացաւ և առաջարկեց հայ ազգի կենացը մօտաւորապէս հետեւեալ խօս-քերով։
«Մի բաժակ ևս ունիմ առաջարկելու որովհետեւ էջմիածինն հոգեւորականու-թեան վայրն է, իսկ ազգի սիրտը, ամբողջ հայ ազգի ուշ ու միտքը դար-ձած է այդ վայրը և միշտ հետեւում է նրան, խմենք հայ ազգի կենացը, որի ներկայացուցիչն էք և դուք և նեղու-թիւն էք կրել ու եկել այստեղ։ Խը-մում եմ ազգի և ձեր կենացը»։
Ինչ ասել կուզի, որ այս կենացն ևս կեցցէների տարափի տակ և յոտնկայս խմվեց։ Այս կենացից յետոյ Վեհափա-ռը թողեց սեղանատունը և գնաց հան-գստանալու։
Վեհարանի հիմքում, երկու փոսացը-րած քարերի մէջ գեղեզված մի պղնձ-ձեայ տախտակ դրվեց հետեւեալ արձա-նագրութեամբ։
«Թամի Տեառն 1910 և Հայոց ՌԶՄԹ և Յ ամսեանն յունիսի յաւուր հրաշա-փառ տօնի Հոգեգալստեան, թագա-ւորութեան Նիկողայ Բ. Կայսր համայն Ռուսիոյ, ի Փոխարքայութեան Կով-կասու կոմս Իլլարիօն Իվանովիչ Վօ-րոնցով-Դաշկովի և ի հայրապետու-թեան Տ. Տ. Մատթէոս Բ. Կաթողի-կոսի Ամենայն Հայոց հիմն արկաւ վե-հարանիս ծախիւն և արդեամբ մեծա-գործ բարեբարին Աղէքսանդրի Թ. Մանթաշեանի»։
Վ. Բ. Աղադադեան

ԱՆՈՒԱՆԱՐԿՈՒԹԵՆ Մ Ը ԱՌԹԻԻ
Վառնա 17 Յունիս. 1910
Տէր Խմբագիր՝
«Իրաւունք» Ազգ. լրագրոյ նախորդ շաբթուան թուոյն մէջ, Գոնթաշեանցա-յէն՝ «Անցորդ» ստորագրութեան տակ յօդուածագիր մը, իր մէկ գրութեամբ փութկոտ տեղեկաբեր հանդիսանա-լով Պոթուշանի հոգեւոր հովիւ Տ. Կա-րապետ Գնյ. Թուլմանեանի երեւա-կայական շահատակութիւններու մա-սին ի միջի այլոց մեղսակից կը հրու-չակէր նաև Վառնայի քահանայներէն մին վերոյիշեալ Քահանային հետ պաշ-տօն տակարարելու տեղը ամբաստանու-թեամբ մը։
Ա՛րդ Վառնայի Քահանայներէն մին ալ ես ըլլալով շատերը այնպէս են-թադրած են՝ և ո՞հանք ալ հաւատացած են թէ «Անցորդ» յօդուածին մէջ ակ-նորակուած «Քահանայներէն մին»ը ես եմ, նկատելով որ երկար ատեն Ռու-մանիա ապրած եմ, և հետեւաբար հոն պաշտօնավարելու մասնաւոր ձգտում մը ունենալով հաւանական է որ այդ-պիսի գծուած արարքի մը հանդուրժած ըլլամ։
Զերծ կացուցանելու համար ինք-զինքս անհարկ խեղճանքներէ՝ ներ-կայիւս, հրապարակաւ կուգամ յայտ-նել բոլոր անոնց որոնց որ անկէ թէ եթէ ես Պոթուշան փոխադրուելու փափագ ունենայի՝ երբեք պէտք չ'ու-նէի Տ. Կարապետ Գնյայ. Թուլմանե-անի հետ սակարկութեան մասնելու երբ արդէն պոթուշանցիները տարւե-ներ առաջ փազազ յայտնած են զիս իրենց եկեղեցւոյն վրայ Քահանայ ձեռնադրելու ու ես չ'եմ ընդունած ին-ծի համար միայն հասկանալու պատճառ-ներով։ Եւ ապա Վառնայի վրայ քա-հանայանալէս երեք ամիս յետոյ, այս-ինքն Տէր Կ. Բնյ. Թուլմանեանի Պոթուշան հաստատուելէն առաջ այն տեղի Աղգալին վարչութիւնէն պաշտօ-նակալ նամակ ստացած եմ միեւնոյն փափագը յայտնող, բայց դարձեալ չ'եմ

ստանձնած հակառակ տրուած նիւթա-կան և բարոյական զօրաւոր երաշխիք-ներու։
Ուստի, վերջ մը տալու համար այս անտեղի թիւրիմացութեան, բացարձա-փապէս անհիմն կը յայտարարեմ «Ան-ցորդ» ի գրութեան այդ մասը նա մա-նաւանդ որ պաշտօնակիցս եղող Տ. Սարգիս հայրն ալ զլիսովին կը ժխտէ իր մասին տեղափոխուելու նպատա-կաւ եղած պաշտօնակաւն կամ անպաշ-տօն ո՛ր և է համաձայնութիւն։ Բաց աստի, եթէ «Անցորդ»ը կրօնա-յարա-բերական իրաւասութեանց օրէնքները ըմբռնելու կարող մէկը եղած ըլլար՝ շատ դժբախտեամբ պիտի կրնար մա-կարեբել թէ առանց Պատրիարքարանի թղթաւորութեան Քահանայներու միջև այդ մասին գոյացած ո՛ր և է հասկա-ցողութիւն բնաւ ոյժ չ'կրնար ունե-նալ երբ մանաւանդ անոնք կրօնական իշխանութեան որոշումով կը պաշտօ-նավարեն ո՛ր և է եկեղեցւոյ վրայ։
Ինչպէս կ'երևի «Անցորդ»ը իր ան-ցորդի հանգամանքովը անցողակի կեր-պով կը տեսնէ ու կ'ըմբռնէ առձերբ և երեւոյթները ու միւս կողմէ բնաւ խղճահարութիւնը չ'ունենար աղարա-լու քահանայ մը-Տ. Կարապետ Թուլ-մանեանը-որը անցեալին մէջ, իբրեւ զարգացած մարդ և կարող Ուսուցիչ, երկար տարիներ Պիթիւի մէջ իբր կըր-թական տեսուչ և միեւնոյն ատեն Ու-սուցիչ, բնվիմաւոր գործունէութիւն մը ունեցած է, և չ'նայելով իր այս կրկնակ ծանր զբաղումներուն, յամա-աշխատութեան շնորհիւ հրատարակու-թեան տուած է երկու կտոր օգտակար զրքեր «Առեւտրական-Տնտեսական Աշ-խարհ» և «Կոնջ հոգեբանութիւնը» ա-նունով։ Նոյնպէս երկար ատեն թըղ-թակցած է զաւառէն պղտական թիւ-թերուն իր զուտ կրթական և Բանա-սիրական յօդուածներով որոնք իր ժա-մանակին քահանայութեան արժանա-ցած են։ Ի վերջոյ Կիրաստի Ազգ. վարժարանին Տեսուչ կարգուելէ և ժամանակ մը այդ պաշտօնը վարելէ յետոյ ժողովուրդին միահամուռ փա-փազով քահանայ ձեռնադրուած է կի-րաստի եկեղեցւոյն վրայ այնպիսի պաշ-մաններով որոնք քահանայութեան վարկը կը բարձրացնեն և արժաթա-մովութեան հակուսները կը չեղոքաց-նեն, մոլութիւն մը որ դժբաղբարար մեր քահանայական դասուն անկողմ-նակալութիւնը կաշկանդող և յուսա-տացումի մղող ամենէն ախտաւոր մէկ կողմը կը բնորոշէ։
Ու Տ. Կարապետ Թուլմանեան Կի-րաստի մէջ 8 տարի-և ոչ թէ անցեալ Դեկտմ. վերջերը քահանայ ձեռնադր-ուած ինչպէս կ'զրէ «Անցորդ»ը-իբրեւ քահանայ պաշտօնավարելով այն տեղի կրթական և հասարակական գործերուն մէջ օգտակարութեան կարեւոր դեր մը ունեցած է, Բաւապետութեան շրջա-նին Կիրաստի եկող և անկէ մեկնող բոլոր ճամբորդներուն հանդէպ իր հիւ-րասիրութեամբը և կառաւարական դժուարութիւններու հանդէպ դիմա-գրաւամբը անոնց ամենուրեք օժան-դակած, և ի վերջոյ իբրեւ բազմապի-շտանի իր հայր իր նիւթական անձ-կութեան պատճառաւ Պոլիս եկած է ուրկէ Պատրիարքարանի կարգադը-րութեամբ զրկուած է Պոթուշան։
Ամենէն վերջ, կ'երևի թէ Սեւանիկի թաղականութիւնը հաւաստիքներ ստա-ցած ըլլալով Տէր Թուլմանեանի ու ե-ցած մօտաւորական և վարչական կարու-ղութեանց վրայ, Պատրիարքարանի քանիցս խնդրեց որ իջեալը Սեւանիկի հոգեւոր հովիւ կարգուի, վերջերս ալ Կրօնական Ժողովոյ որոշմամբ Տէր Թուլմանեան կը փոխադրուի Սեւա-նիկ, ուր հաւաստի եմ թէ նա մեծա-պէս օգտակար պիտի հանդիսանայ Կրօ-նական, Կրթական և վարչական ամէն տեսակ գործերու մէջ։
ՀԱՄԱՐԱՅԻՆ ՔՀՆԵՑ. ՊԵՏԻԿԵԱՆ

Վարժարանը ներկայ ողբալի վիճակէն:

Այս նպատակաւ անցեալ կիրակի օր խումբ մը ազգայիններ խորհրդակցութիւն կատարած են վարժարանի սրահին մէջ և առջի օր ալ հրաւեր մը ուղղած են վառնայաբնակ հայ հասարակութեան, վաղը կիրակի, ժամ 9ու կէսին ներկայ գտնուելու համար Ազգ. Վարժարանի մէջ, ուր խորհրդակցութիւն պիտի ըլլայ կանոնադրութեան մասին և ընտրութիւնը պիտի կատարուի Գործադիր Ժողովոյ:

Հ Ա Վ Ա Տ Ի Ս Ա Թ

ԹԻՒՐԻՔԻԱ

Մերտինտէն 100 խանէ եւզիտիւր էրմինի մէջ հէպտի գապուլ իթմէ քէքեարընտօ օլտըզլարը: Նը հիւքիւմէթ տույմասընտա օնլարա գարըը միւմանէաթ չըգարմը, վէ եւզիտիւրին ըէյիսի պուլընան ճէյիս իսմայիլի թու: Թուպ մահպուս իթմիշ տիր: Պու: Նուն իւզէրինտէն պուլընան էվրագլարտան անլալըմըլէի եւզիտիւրին խրիսթիան օլմասընա տայիր էրմէնիւր իլէ մուխապէ: Բէտէ իմիշ Տիրապէքիրտէքի ին: կիլիզ գօնսօլտընըն թէրճիւմանը պու մէսէլտէն տօլայը Մէրտինէ կիլիմիշ տիր:

Եւզիտի թապիր օլունան պու գալմ պիր եւզլ բուլթէրէս ատտ օլունապիլիր: օնլար 60—70,000 նուֆուստան իպարէթ օլուպ, Տիրապէքիր: Մուսուլ վէ կովկասիա էյալէթլէրինտէ մուգիւմ տիլլէր:

Թիւրք հիւքիւմէթիսին անլարը խրիսթիանլըզը գապուլ իթմէ քէքեարընտօ մէսն իթմէսի մէտէնի: յէթէ պիր տարպէ վուրմագ օլտըզը կիպի, խրիսթիան մէզհէպիսն գարըը նէ տէրէճէ խուսու: մէթի օլտըզընը իմա իտէր: Եանի եւզիտիւրին բուլթէրէսթ վէ եապանի գալմասը խրիսթիան օլուպտէ մէտէնիյէթ քէսպ իթմէլէրինտէն տահա էյի կէօրիյօր: Իշթէ պունա քիէօն—Թիւրք մէտէնիյէթի տէրլէր:

Պիզիմ Պատրիարքարան իսէ հիւքիւմէթին պու թասուպընը կէօրէրէք: Եւզիտիւրին էրմէնի մէզհէպիսն գապուլ իթմէքտէն զօրգապ անլէրին միրաճա: աթընը ըտտ իթմէկէ մէճպուր օլմուշ տըր:

—Թիւրքիա տախիլինտէ Եօլ ճըլըզ իթմէք իշիւն չիմտիյէ գատար արանըլան Եօլթէքէրէսի լազվ օլունտուր: Տախիլիյէ նազըըը պու պապտա պիւթիւն վիլայէթլէրէ թէլէկրաֆ վէրաի Պունտան քօնրա թէքքէրէսիզ վէ բաշարօրթ: օրը Թիւրքիանըն հէր թարաֆը: նա կիտիլէպիլէճէք տիր:

—Անաթլու գըթասընտա 7000 քէյմ: Թիւրք Եօլ եաթըըմագ իշիւն

նաֆաա նէզարէթի գօնթուրաթմը արամագտա տըր:

—Արնալուտըղըն հէր թարաֆընտան վէ հէր կիւն պինլէրճէ սիլահ թէսիլի ալընտըղը: նա տայիր մահէլի հիւքիւմէթլէրտէն տախիլիյէ նէզարէթիսն բաթօրթլար եաղմագտա տըր: Զապթ օլունան թիւֆէնկիլէրին մըգտարը երիզպիսն կէլտի:

—Խարբուլ վիլայէթի տախիլինտէ Մալաթիա գողասընտա տօլու եաղմըլ օլմալլէ՝ արբալար քեմաիլէն վէ պուզտայլարըն 4տէ իւզիւ մահվ օլմուշ տըր:

—Կիրիտ մէսէլէսինտէն տօլայը պօյքօտ էլան տէվամ իթմէքտէ տիր:

Մէզքիւր մէսէլէնին հալլը Կիրիտ մէճլիսի մէպուսանըն թօըլանմասընա գալմըլ տիր: Մէճլիս պու կիւնլէրտէ թօըլանա: ճագ իսէտէ ատտա իքի էֆքեար վալ տըր: պիրի գաթիէն Կիրիտի Եունանիստանա պիրլէշմիշ ատտ իտէրէք՝ իսլամ մէպուսլարըն վէ մէմուրլարըն Եունան գըրալը նամընա Եէմին իթմէլէրինի իտտա իթմէք վէ անլէրի Եէմին: սիզ գապուլ իթմէմէք: Իքիսնի էֆքեար՝ տէվլէթլէրին թայէպի իւզրէ իսլամ մէպուսլարը Եէմին: սիզ մէճլիսէ գապուլ իթմէք: Պու իքի էֆքեար իշիւն մէպուսլար պէյնինտէ իթթիֆագ հասըլ օլա: մատըղընտան Մէճլիսին թօըլան: մասը կիւն կիւնէ աթըլիյօր: պու սէպէպտէն տէ Պապը Ալի իթիւրազ իտէյօր:

Սուտա քէօրէքէլիտէ 9—10 ատէտ էվրօք հարպ վարօրլարը թօըլանմըլ օլուպ, էկէր տէվլէթլէրին թալէպի խիլաֆընտա պիր գարար վէրիլէճէք օլուր իսէ, մէզքիւր վարօրլար թէքրար տտայա ասքէր չըգարուպ, իտարէի հիւքիւմէթի համի տէվլէթլէր նամընա էլէ ալաճագլար:

—Խալմլարըն պիրտէն զիյա: տէ գարը ալմասընա Ամիրկալըլար Բէք զըտտ օլտըզլարընտան, մէմլէքէթլէրինտէ էվլէն: միշ օլան իսլամլարը իշէրի գապուլ իթմէյուպ, տէր: հալ կէրի չէվիլիյօրլար:

—Մաքէթնիստաքի քիլիսէ մէսէլէսի Մէճլիսի Մէպուսանըն վէ Ալանըն գապուլ իթտիլէրի գանուն մուճէպիսնէ հալլ օլունի: յօր: զիրա ըում բաթրիզհանէսի: նին բօթէսթլէրի խիլաֆընա օլարագ մէզքիւր գանունը Սուլթան թաստիգ իթմիշ տիր վէ սատըրագամ տախի անըն իճրա: սը իշիւն Մաքէթնիստա վալիլէրի: նէ էմը վէրմիշ տիր: Իշպու գանունլէ էսկի քիլիսէ վէ մէքթէպլէր մահէլին էքսէրիյէթի թէլէքիլ իտէն միլլէթ վէրիլուպ, ալըլ օլան միլլէթ իշիւնտէ հիւքիւմէթ սանտըղընտան Եէնի քիլիսէ վէ մէքթէպ Եաթըլաճագ տըր:

—Մաքէթնիստա պուլկար:

լարա պիր գալ Եէնի տէսըթ պէլ: րաթը վէրիլէճէկինէ գարըը Բում Բաթրիզհանէսի Սատրագամ իթիւրազ իթմէսի իւզէրինէ, Հագգը բաշա պու շալէանըն ասլը օլմա: տըղընը պէյան էյլէմիշ տիր:

—Բում բաթրիզհանէսին իքի մէճլիսլէրի Մաքէթնիստա քիլիսէլէրի իշիւն Եէնի գանունմալէ: նին Սուլթանտան թաստիգ օլունտըղընա գարըը խօշնուտիյէթ: սիլիլիլինի վէ մէզքիւր գանունը Բաթրիզհանէ թանըմայաճաղընը Բաթրիզ վասիթասը իլէ Պապը Ալիյէ վէ Սուլթանա արզ իտիլ: մէսինի թահթը գարարա ալտըլար:

—Բուսիատան տէնիզ վէ գարա թարիզի իլէ Թիւրքիայա կիրէն Եօլճըլար վէ էլէալտուր սըհէյէ գօմիսինը թարաֆընտան թէֆթիշլէ տէզէնֆէգթէ (ապանիսում) օլաճագլար:

Բուսիանըն պիր չօգ վիլայէթլէրինտէ գօլէրա պաշ կէօսթէր: միշ օլտըղը վէ Բօտտօլտա 6 կիւն գարֆընտա 12 55 քիլի գօլէրա: յա թուլթուլմուշ պուլընտըղը ըէսմէն իլան օլաւտու:

—Սօֆիատա թէճէմմիւ օլունան բանսլալիզմ գօնկրէսինէ իշթրաք իթմէք իշիւն սալըկիւնիլու սիատան 135 ըուս մուրախասլարը չէհրիմզէ միւվասէլէթլէ Սօֆիա յա կիլիմիշ տիրլէր:

Գօնկրէսին գարարը իւզրէ՝ Սըլալ միլլէթլէրի Ալմանլարըն թէճագլիւզաթընտան վըգալէ իթմէք իշիւն պիր թագըմ թէտապիրլէր իթթիլսագ օլունաճագ տըր:

Կէլէճէք սէնէ տախի բանսըլալիզմ գօնկրէսի Պէլրատտա թէճէմմիւ օլունաճագ տըր: Սօսիալիսթլէր պու գօնկէլէրի Բուս միւսթէպիտլէրին էնթրիգասը ատտ իտէրէք, մուխալիֆ նիւմա: յիշաթտա պուլունմագ իսթէտիլէր վէ կաղէթալարընտա պու մասլտա պէնտլէր եազտըլար:

—Ալման կաղէթալարը ինկիլիլէրին Արապիստանտա թէճէսի: րի արթմասընտան էնտիլէ իտէրէք, Թիւրքլէրէ թէշլիլգաթտա պուլունիյօրլար: Բուս նամ ալման կաղէթասը տիրօրքի՝ Եէնի Սամանլը ըէթիմի Արապիստանըն թէճամիլիլէրին մուհաֆաղա իթ:

մէք իշիւն հէր նէվ ֆէտաքեար: Լըզը իճրա իթմէլի տիր: զիրա Արապիստան Թիւրքիա իշիւն Բէք մուհիմ տիր: Կիրիտ իսէ պիր կիւն պուրպան կիթմէկէ մահթիւմ տիր, տէյօր:

ՊԵՏԱԽՈՒՆ

Սիւզէնի ընտիր մեքենաներ գիւրամատչելի գնեքով: Ով որ պէտք ունի թող գիմէ Իրաւունքի խմբագրատունը:

ԹԻՒՃՃԱՐԻՑԷ

ԶԱԽԻՐԷ	
ՊՈՒՏԱՅ	
Վախօն 100 քիլօ .	17/18
Արապա 45-80 լիպ .	13.85
ԱՐՐԱ	
Վախօն 100 քիլօ	10/11
Արապա 45-52 լիպ .	6.45
ԵՈՒԼԱՅ 100 քիլօ	9.9 50
ԶԱՎՏԱՐ 100	10/11
Արապա	10.55
ՅԱՍՈՒԼԻԱ 100 քիլ .	23.
ՏԱՐԸ » »	15/16
ԲՕԼՕԶ արապա 55-60 լպ .	Եօգ
Միսիւր 100 քիլօ	10.80/11
Արապա 75 »	8.
ՊԱՏԱԼԻԷ	
Վառնա ըրացարտա պագգալիյէ մալլէրին պու կւնքի ֆիլաթը, ալթի ֆըրանք իլէ:	
ԳԱՀՎԷ	2. 15/2. 30
Շէֆէր շէմյէ քէլլէ	1.
Շէֆէր քէմէ սանտըգ—51	
ԲԻՐԻՆՇ ձէնօլա չուվալը	47.
» Ինկիլիլ »	34.
» Բիլօն »	53.
» Յիլիպէ »	47.5.
ԿԱԶ Պաթում Սանտըղը	9.30
» Թրայան »	8.80
Զէթօրն եաղը քիլօ	4.50—1.70
ԳՈՒՐՈՒ Իւզիւմ	60./70.
Եունուրթա	5.

ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

«Իրաւունք»ի խմբագրատունէն կարելի է ստանալ
Հետեւեալ գիրքերը:
ՀԱՐԻՊ ԱԽՊԷՐ գին 1. ֆր
ԱԶԱՏ ԵՐԳԱՐԱՆ » 1. »
ԹԻԱՊԱՐՏ Ա. հատոր » 1.50 »
ԹԻԱՊԱՐՏ Բ. » » 2.50 »
ԿԱՐՄԻՐ ԵՍՍՈՒՅ » 1.10 »
ԻՐԱԽՈՒՆԻ հաւաքածոյ մէկ տարուանը 12 ֆր.

Издатель: X Курбетянъ
Տպարան «Իրաւունք»ի Վառնա

ՏՊԱՐ. «ԻՐԱՒՈՒՆՔ»Ի

ԿԸ ՏՊԱԳՐՈՒՆ ՄԱԳՈՒՐ ԵՒ ԶԱՓԱՌՈՐ ԳԻՆԵՐՈՎ
ԱՄԵՆ ՏԵՍԱՆ ԳՈՐԾԵՐ
Հարսանեկան հրաւիրագիր, Այցատու, Նամակագրութիւն, պահաւան պարտավորեալ, Հաւուքուղբեր և ուրիշ գործեր

Հայերէն Պոռնոգրաֆիկ եւ Ֆրանսերէն

Մեզ դիմողներու ճաշակին գոհացում տալու համար Տպարանս իր տրամադրութեամբ տակ ունի տէնապիլին սիստէմի գործիքներ և տառեր

ՅԱՆՁՆԱՐԱՌԻԹԻՒՆ ԿԸՆԴՈՒՆՈՒՆ ԿԱՆԽԱՎՃԱՐՈՎ ՄԸ